մոտ, մի երեք օր այսպես պահում. երբ հոտում էր՝ դուրս էին հանում, շուղը թափում, մազը ձեռքով քանդում, ապա հոլղորմ ըն՝ տրորում են. կաշին փափկում էր, կոկլրկանըմ՝ հարթվում։

Տեգի պորտի և ետևի ծակերը փակում էին փայտե կլոր կտորների՝ սրկոլակնէրի վրա ամուր կապելով, իսկ վիզը պահում էին ազատ, որպես տկի բերան։ Հեղուկը դուրս ածելու համար առջևի ոտներից մեկի, սովորաբար ձախի վրա հարմարեցնում էին փայտե խողովակ։ Տկէրի և մանավանդ ահագին ռումբի վերջնական պատրաստումը կատարվում էր մասնագետ վարպետի ձեռքով։

Ոչ տիկ հանած, սոսկ մաշկած և մազից մաքրած կաշուց էին կարում տրէխնէր, իսկ ավելի լավ փափկացրածից՝ պարկեր։ Պարկերը, սակայն, ավելի հաճախ շինում էին տիկ հանած կաշուց։ Վզի կողմը կարում էին, իսկ պոչի կողմը թողնում ազատ, որպես պէրան։

Տան մեջ պատերից և սյուներից կախված էին լինում զանազան մեծություն ունեցող պարկեր—սկսած մեծ տեսակներից, որոնց մեջ պահվում էին, օրինակ՝ ձավար, բրինձ, և վերջացրած փոքրերով, օրինակ՝ շօքանի պարկով, որով նա մածուցը երբեմն իր հետ տանում էր դաշտ։ Պարկերի մեջ կախված պաշարը պաշտպանվում էր տան խոնավությունից։

Ձօքանի մեջքին ձգած պարկը շինվում էր մեծ մասամբ մազը դուրս պահած տկից։ Այսպիսի պարկը Զանգեզուրում չէր ասեղնագործվում և այնպես զարդարվում, ինչպես Լենինականի, Ապարանի, Ախալքալակի, Ախալցխայի և առհասարակ Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի մեջ։

ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հին Զանգեզուրում գործածվող ամանները, թե՛ կերակուր պատրաստելու և թե՛ մթերք պահելու, մեծ մասամբ հողից՝ կավից էին շինում։ Մեր այցելության միջոցին արդեն տարածվում էին գործարաններում պատրաստված հախճապակե և մետաղե՝ էմալարած, այլումինի, պղնձե, ապակու ամանները, իսկ հնում եղած ամբողջ պահանջը բավարարվում էր միայն տնային և արհեստավորական արտադրությամբ։ Առաջինը՝ առավելապես Սիսիանում և Կապանում, երկրորդը՝ մանավանդ Գորիսի շրջանում, որտեղի պրոնտնէրը՝ բրուտները անուն էին հանած ոչ միայն գավառում, այլև ավելի հեռավոր վայրերում, օրինակ՝ Լոռում, որտեղ Քոլագերան գյուղի բրուտները զանգեզուրցիներն էին։

Տնային կավագործությունը բացառապես կանանց գործն էր, իսկ բրուտությունը՝ միայն տղամարդկանց։ Կանայք գործադրում էին շատ հին ավանդական տեխնիկա։ Աշխատանքին մասնակցում էին առնվազն երկու կին։ Նախ պատրաստվում էր անհրաժեշտ նյութը. սովորաբար երկու բեռ դումի՝ ավազի հետ խառնվում էր մեկ բեռ կավ, երբեմն նաև ծեծած աղ, իսկ թրօճի համար՝ նաև շնչին քանակությամբ փոշի դարման և մի բուռ այծի մազ։ Մի կին այս ցեխը բոբիկ ոտներով կոխոտում էր և հունցում, պատահում էր, որ դա տևում էր երկու օր։ Ստացվում էր մածուցիկ զանգված, որը նույն կինը կամ մի ուրիշը, տախտակի վրա[130] երկու ձեռքերով ետ ու առաջ գլորելով պատրաստում էր հաստ գլաններ կամ սուջուխանման՝ պարանանման կազմէր[131]։ Իսկական

130 Հաճախ վերցնում էին խմորի սեղան-տախտակը։

131 Ալաշկերտում՝ պլուլ, Իգդիրի հայերի, հոռների մոտ՝ տրմրակ, ախալքալաքցիների մոտ՝ լոլոզ։ Ռուս.—жгут.